ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) կանոնադրության 17.3 կետի 27-րդ ենթակետի, ինչպես նաև Պալատի նախագահի 03.06.2016թ թիվ 173-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի 7.5 կետի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ***Հաստատել մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում Պալատի մարզային համակարգողի ընտրության քվեաթերթիկի ձևը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:***
2. ***Հաստատել երկու կամ ավելի թեկնածու քվեարկվելու դեպքում Պալատի մարզային համակարգողի ընտրության քվեաթերթիկի ձևը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:***
3. ***Հաստատել մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում մարզի քաղաքի պատասխանատուի ընտրության քվեաթերթիկի ձևը՝ համաձայն թիվ 3 հավելվածի:***
4. ***Հաստատել երկու կամ ավելի թեկնածու քվեարկվելու դեպքում մարզի քաղաքի պատասխանատուի ընտրության քվեաթերթիկի ձևը՝ համաձայն թիվ 4 հավելվածի:***
5. ***Սահմանել, որ քվեաթերթիկները տպագրվելու են 2016թ. հուլիսի 8-ին, ժամը 11:00-ից սկսած՝ ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում, ք.Երևան, Զաքիյան 2 փողոց, 4-րդ հարկ, թիվ 14 սենյակ հասցեում:***
6. ***Սահմանել, որ Պալատի մարզային հաշվիչ հանձնաժողովի 28.06.2016թ. թիվ 3-Լ արձանագրության համաձայն՝ թեկնածուներ չգրանցվելու հետևանքով Արագածոտնի մարզում մարզային համակարգողի և Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքում պատասխանատուի 09.07.2016թ. ընտրությունները չեն կայանալու:***
7. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել համապատասխան մարզերի փաստաբաններին:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

07 հուլիսի 2016թ.
թիվ 209-Լ
ք. Երևան